

ՆԱՐԵԿ ՄԻՋՆԱԿԱՐԳ  
Կը Գրեն Մեր Շրջանաւարտները



ՆԱՐԵԿ ՄԻՋՆԱԿԱՐԳԻ 2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԵՐ ՇՐՋԱՆԱԻԱՐՏՆԵՐՈՒ ՀԱՅԵՐԸՆ ԼԵԶՈՒԻ ԵՒ  
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԵՐՈՒ ՏԱՐԲԵՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՒ  
ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԶՏԻԿ ՄԱՍ ՄԸ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵՆՔ ՁԵԶԻ:  
Վիոլէթա Թաշճեան

ԱՐԵԻ

Եթէ կարենայի բան մը ըլլալ՝

Արեւ պիտի ըլլայի:

Ինչպէս գիտենք բոլորս ալ,

Առանց արեւի կեանք չկայ:

Ես ընտրեցի արեւը՝

Որովհետեւ այն մարդոց

Կու տայ տաքութիւն:

Առանց տաքութեան`

Մարդիկ պիտի պաղին:

Արեւը ուրախութիւն կու տայ,

Լոյս կու տայ,

Որ կարենանք տեսնել մեր շուրջը:

Առանց լոյսի` այս վայրկեանին,

Բան մըն ալ պիտի չկարենայինք ընել:

Ինձի համար արեւը մեր կեանքն է:

Միքայէլ Փալանտուզեան

ՄԵՐ ԳԻՐՔԸ

Պարզապէս գիրք մը չէ լոկ խօսքերու,

Ոչ ալ էջեր սառած տողերու,

Այլ` ամբողջութիւն հուր միտքերու,

Պատմութիւններ մեծ անցեալի,

Ճնշուած մանուկի ու երագի,

Դժուար գիծերու ու պայքարի:

Գիրք չէ միայն, այլ ծով թռչունի,

Բարքի, փառքի ու հաւատքի,

Անձայր թուացող հին յուշերու,

Ու ժպիտ մոռցուած դէմքերու:

Այդ սպին՝ օրուայ հացի կարօտով լի:

Թէ նոյնիսկ անցնին դարեր ,

Պիտի յիշուին անոնք՝

Որ չունեցան մանկութիւն:

Էտկար Էվոյեան

### ՄԵԾ ՀԱՅՐԻԿԻՍ ՀԵՏ

Իմ անունս Միքայէլ է եւ ծնած եմ Թեսալոնիքի քաղաքը: Մանկութիւնս հոն անցուցած եմ: Նախ եւ առաջ ըսեմ թէ Թեսալոնիքին շատ մեծ քաղաք է, նաեւ շատ սիրուն: Գրեթէ մէկ ու կէս միլիոն մարդիկ կ'ապրին հոն: Ամէն ամառ հոն կ'երթամ որպէսզի իմ մեծ հօրս եւ մեծ մօրս տեսնեմ:

Մանկութեան օրերս շատ լաւ անցուցած եմ: Կը յիշեմ մեծ հայրս ինծի բակ կը տանէր որ խաղամ: Տաք օրերը ծով կ'երթայինք եւ ուրիշ տարբեր տեղեր ալ: Երբ բակ կը տանէր զիս, ոտնագնդակ կը խաղայի տարբեր երեխաներով եւ իրենց հետ կը ծանօթանայի ու կ'ընկերանայի: Շատ լաւ կը յիշեմ որ իմ մեծ հայրս ամէն առաւօտ երբ կ'արթնայինք մեզի նախաճաշ կը պատրաստէր եւ յետոյ դուրս կ'երթայինք, ես եւ զարմիկս՝ Էրիքը խաղալու: Նաեւ լաւ կը յիշեմ թէ մեծ հայրս միւս մարդոց հետ կը խօսէր, երբ որ մենք կը խաղայինք: Ինչպէս ըսի քիչ առաջ, տաք օրերը մեզի ծով կը տանէր որպէսզի լողանք եւ պաղպաղակ ուտենք: Ծովեզերքը մարդ մը կար որ պաղպաղակ կը ծախէր: Ընդամենը երեսուն վայրկեան էր ծով հասնիր, ատոր համար ալ շատ անգամ կ'երթայինք:

Դժբախտաբար իմ մեծ մայրս մահացաւ երբոր հինգ տարեկան էի: Մեծ հայրս տխուր կը տեսնայի: Բայց երբ ես եւ զարմիկս իր շուրջը ըլլայինք, ինքը ինչպէս առաջուայ օրերը կ'ըլլար: Աւելի լաւ կը զգար երբ մեզի կը տեսնէր ու կը փորձէր մեր առջելը տխուր չըլլալ:

Իմ մեծ հայրս դրական մարդ մըն էր: Ան դժուար պայմաններու մէջ  
մեծցած էր: Շատ չէր խօսեր եւ քիչ մըն ալ խիստ էր: Մեզի կը սորվեցնէր  
միշտ մաքուր եւ կոկիկ ըլլալ: Երբ կ'արթնայինք մեր անկողինը պէտք  
էինք շտկել: Շորերը միշտ ծալած պէտք էինք ըլլալ: Ինք բարձր եւ նիհար  
մարդ մըն էր եւ կը սիրէր միշտ դասական ձեւով հագուիլ: Ան մեզ կը  
ստիպէր կարդալ՝ որ սորվինք:

Թեսալոնիքի ապրիլը դժուար էր, ասոր համար ալ Կիպրոս եկանք  
ապրելու: Մեծ հայրս Յունաստան մնաց, բայց կը յիշեմ տարի մը եկաւ  
Կիպրոս որ մեզի տեսնէ՝ ինծի եւ ծնողներուս: Օր մըն ալ ինծի դուրս  
հանեց որ քիչ մը պտտինք: Կը յիշեմ իմ ձեռքս բռնած էր եւ Նարեկ  
վարժարանը տեսաւ: Երբ տուն գացինք, անմիջապէս ըսաւ իմ հօրս եւ  
մօրս թէ ես պէտք էի հայկական դպրոց յաճախել: Անոնք անշուշտ  
համաձայնեցան: Շատ լաւ կը յիշեմ իմ առաջին օրս Նարեկ, ինծի նորէն  
ձեռքէս բռնած տարաւ դասարան եւ երբ վերջացաւ դպրոցական օրը,  
եկաւ եւ ինծի տուն տարաւ: Նարեկ Միջնակարգ յաճախելուս հիմքը մեծ  
հայրս ստեղծեց:

Կրնայի աւելի շատ յիշողութիւններ ունենալ իր հետը, բայց ցաւօք սրտի  
ինք մահացաւ երբ տասը տարեկան էի: Կը յիշեմ վերջին օրերը շատ  
հիւանդ էր եւ միշտ կը փորձէի հետը զբաղիլ եւ տարբեր նիւթերու մասին  
կը խօսէինք միասին: Երբ մեծնամ, կ'ուզեմ մեծ հօրս պէս ըլլալ դրական  
մարդ մը եւ ճիշդ մարդ մը:

Միքայէլ Փալանտուզեան

ԻՄ ՆՈՐ ԸՆԿԵՐՆԵՐՍ

Մանկութիւն չունեցող մարդիկ,

Նոր ընկերներով շրջապատիկ,

Իրենց կեանքին մասին սորվելով,

Ու իրենց հետ ընկեր դառնալով:

Անդրանիկը, Խաչիկը եւ Արամը,  
Առին ինձի իրենց մէջը:  
Կեանքի իրականութիւնները ցոյց տուին,  
Ու կեանքի թշուառութենէն փրկեցին:

Անցուցինք ժամանակ խնդալով,  
Կեանքի ճամբաները վազելով,  
Խաւար ճամբաները լուսաւորելով,  
Եւ իրարու լաւ հասկնալով:

Յուզում, ուրախութիւն, տխրութիւն,  
Ինձի տուին հետաքրքրութիւն,  
Ամենօրեայ կարդալու հանգստութիւն:  
Նուիրեցին ինձի խաղաղութիւն:

Գրիգոր Բարոյեան

## ԱՆՑԵԱԼԻ ՄԱՍԻՆ

Յաճախ լսելով մեծ մօրս պատմածները անցեալի մասին ուզեցի  
հարցազրոյց մը կատարել հետը: Ան սիրով ընդունեց եւ ես շնորհակալ եմ:

- Ծնողքիդ անցեալէն ինչպիսի<sup>օ</sup> յիշողութիւններ ունիս:
- Ծնողքս 1915-ի ջարդերէն ճողոպրած են եւ ինչպէս  
Արեւմտահայաստանի բախտով ազատած հայերը, շատ  
չարչարանքներէ վերջ հասած են Լիբանան: Մեծ մայրս 19

տարեկանին այրիացած է եւ եղբայրներուն թեւին տակ կրցած է մնալ եւ իր մէկ հատիկ զաւակը Վարդուհիին ապրեցնելու համար ճամբաներու եզրին շարելիք քար կոտրած է : Ատեն մը վերջ ստիպուած եղած է զինք թռչնոց բոյն տեղաւորել:  
Երբ մայրս ամուսնացած է հօրս հետ ան ալ Ղազիբի որբանոցէն եղած է: Ունեցած են երեք զաւակ որոնց կրտսերագոյնը ես եմ՝ Աղանին:

- Մեծերդ Արեւմտահայաստանէն ունեցած իրենց յիշատակները պատմա՞ծ են:
- Երբ մօրս երկու քեռիները եւ մեծ մայրս քով քովի գային, հազիւ բարեւ ըսէին անմիջապէս <<Երկիր>> կը փոխադրուէին: Կ՝ ըսէին թէ հոն կեանքը աւելի տարբեր էր, մեծերը արտը կը հերկէին իսկ իրենք ալ 12-13-14 տարեկան կը փորձէին օգնել: <<Օտային>> մէջ երբ բարեկամ հայրենակիցներ կը հաւաքուէին եւ զրոյցներ կ՝ ընէին, մօրս պզտիկ մօրեղբայրը աւելի աթնամիտ ըլլալուն՝ Յովհաննէս մեծ հայրը <<Կիրճիւ, դուն ալ եկուր նստէ սէտիբին վրայ եւ լսէ թէ ինչ կը խօսինք, լաւ է լսելով բան կը սորվիս>> կ՝ ըսէ եղեր: Ասիկա կ՝ ըլլար Եօզկաթի 40 գիւղերէն Մենթէշէի մէջ:
- Մեծ մայրիկիդ պատմած հին սովորութիւններէն, ի՞նչ կը յիշես:
- Մեծ մայրս կը պատմէր թէ գարնան, դաշտերը կ՝ երթային հարսեր եւ աղջիկներ ու զանազան բոյսեր կը քաղէին որպէսզի չորցնեն ու ձմեռը ապուրին մէջ դնեն:  
Մենք բակի բոլոր երեխաները , պատանիները այս բոլորը լսելով մեծցած ենք:
- Իր ո՞ր պատմութիւնը ազդած է վրադ:
- Ջարդի ատեն պարտադրաբար հայ գիւղացիները հաւաքած են եկեղեցիին մէջ՝ ջարդելու նպատակով: Ըսեմ թէ մօրս հայրը ջաղացպան եղած է եւ նոյն ատեն շատ սիրուած: Բախտով կրցած

են ազատիլ: Մենք այս յիշատակներուն մղձաւանջներով մեծցած ենք եւ լսելէն չէինք դժգոհեր եւ նոյն հոգիով ու ոգիով կը պատմեմ գաւակներու եւ թոռնիկներու:

Արտաշէս Տէր Պետրոսեան

## ԱՆՁՐԵԻՇ

Անձրեւ, կաթիլ-կաթիլ կ'իյնայ մեր աշխարհին

Ու բնութեան կեանք կու տայ:

Ծառերը կը կանաչնան ու ծաղիկները կը ծաղկին:

Անձրեւը կը մղէ որ շատ զգացումներ ունենանք,

Թերեւս ուրախ կամ տխուր կը զգանք:

Ամպոտ, մութ երկինք, որոտումներ ու կայծակներ

Կը լսուին մեր երկինքին:

Անձրեւ, արեւուն պզտիկ լոյսը կը ճեղքէ ամպերուն միջեւ,

Մեզ լոյս կու տայ, պայքար կու տայ, կը նմանի հայուն հոգիին:

Անձրեւը իր հետ կը բերէ պաղ զեփիւռ, մաքուր օդ,

Նոյնիսկ հետը կը բերէ պատմութիւն մը անձնական:

Կը զգանք թէ ամպերը մեզ համար կու լան:

Կը հասկնան մեր զգացումները եւ ջուրի կաթիլներով

Ցոյց կու տան, կաթիլ-կաթիլ վրանիս կ'իյնան,

Մեզ կը թրջեն եւ ուրախութեան մէջ կը պահեն:

Գրիգոր Բարոյեան

## ՊՏՈՅՏ

Պտոյտը մեծամասնութեան համար առիթ մըն է երթալու լեռ, ծով եւ հաճելի ժամանակ անցընելու: Թերեւս այս կարծիքը ճիշդ է, բայց իմ կարծիքովս պտոյտը շատ աւելի կարելոր նշանակութիւն մը ունի մարդոց համար: Պտոյտը կրնայ ըլլալ առիթ մը որ բնութիւնը եւ մարդը միանան եւ մէկ ըլլան: Նոյնիսկ մարդուն համար առիթ մըն է, որ ամէն ինչէն հեռանայ եւ ժամանակ ունենայ իր ընտանիքին կամ ընկերներուն հետ: Մէկը միւսին հետ ժամանակ անցընելով իրարու աւելի լաւ կը հասկնան:

Պտոյտ ըսելով թերեւս միայն լաւ ժամանակ ունենալ չէ: Իմ կարծիքովս պտոյտ է այդ ճամբան, որ մենք կը հետեւինք դէպի լաւը: Մեր կեանքը պտոյտ մըն է, անվերջ պտոյտ մը՝ որ իր մէջ ունի վերն ու վարը, ձախն ու աջը, մութն ու լոյսը եւ տարբեր տեսակի մտածումներ:

Միշտ այդ հարցումը կը պտտի մարդոց մտքին մէջ: Թերեւս կեանքը պտոյտ մըն է: Ամէն անձ իր առջեւ կը գտնէ եւ ունի երկար պտոյտ մը, որ վայրկեանական կը փոխուի: Պտոյտ ըսուած բառին նշանակութիւնն է կեանք, պայքար ու երկար ճամբայ:

Գրիգոր Բարոյեան

## ՄԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՐՔԸ

Այս ուսումնական տարուայ սկիզբին մենք սկսանք կարդալ <<Մանկութիւն Չունեցող Մարդիկ>> գիրքը: Հազիւ սկսանք այս գիրքը տիկինին հետ, եւ շատ սիրեցի, եւ շատ հետաքրքրական գտայ ինձի համար: Այս գիրքը տուաւ ինձի շատ լաւ յիշողութիւն: Սորված եմ շատ բաներ որ կ'օգտագործեմ իմ կեանքիս մէջ:

Այս հրաշալի գիրքին կազմն ալ արդէն հետաքրքրական է, կ'ուզես իմանալ ինչ գրուած է: Այս պատմութիւններէն իւրաքանչիւրը ուսանելի է: Անոնցմէ իւրաքանչիւրի գլխաւոր հերոսները կ'անցնին իրավիճակներ,



որոնցմէ մենք կրնանք դասեր քաղել մեզի եւ մեր հետագայ կեանքի համար:

Շնորհակալութիւն մեր սիրելի ուսուցչուհիին, ով իր ամբողջ հոգին կը ներդնէ մեր երկրին ու ժողովուրդին գրականութիւնը դասաւանդելու համար: Մենք այս տարի վայելէր ենք այս հրաշալի գիրքի հետաքրքրական պատմութիւնները : Ես շնորհակալ եմ մեզ հետ ունեցած աշխատանքի, ժամանակի եւ համբերատարութեան համար:

Կարինա Սիմոնեան

## ԼԵՐԱՆ ԽԱՉԸ

Հայաստանի մէջ անցուցած արձակուրդներէս ամենատպաւորիչ օրը Վանաձորի լեռները արշաւելու օրն էր: Արշաւէն մէկ օր առաջ պատրաստուեցանք եւ գծագրեցինք մեր յաջորդ օրուան ընթացքը: Մեր արշաւի կազմակերպիչը մեծ մայրս էր եւ ան մեզի պիտի առաջնորդէր, քանի որ ճամբու վրայ ինձի, մեծ մօրս եւ զարմիկիս պիտի միանային նաեւ քանի մը ընկերներ:

Առտուն շուտ արթնցանք, հանգիստ պատրաստուեցանք, առինք մեզի հետ տաք հագուստներ եւ մի քանի ուտելիք, որպէսզի հոն ճաշենք: Ճանապարհը սկսանք դէպի լեռներ: Ճանապարհին մեզի միացան նաեւ մեր ընկերները եւ երթը դարձաւ աւելի հետաքրքրաշարժ:

Երկար բարձրանալէ ետք կեցանք քիչ մը հանգստանալու: Մեր դիմաց կը բացուէր ամբողջ Վանաձորի տեսարանը, իր հին շէնքերով եւ ջերմ անցուդարձով: Շարունակեցինք ճանապարհը եւ յանկարծ նկատեցինք իմ սիրելի ազնուամորիին թուփերը եւ կամաց-կամաց ուտելով բարձրացանք աւելի վեր: Որոշ ժամանակ անց հասանք կանաչապատ դաշտ մը եւ լերան գագաթը այլեւս հեռու չէր թուար: Երկար տանջանքներէ եւ յոգնելէ վերջ մենք արդէն լերան գագաթն էինք: Մէկ կողմէն կանաչով ներկուած դաշտերը, միւս կողմէն զեփիւռը եւ այս ամէնը Վանաձորի ճաճանչ տեսարանի հետ մէկտեղ:

Այս կախարդանքի մէջ ինձ ամենաշատ տպաւորեցին այն երկու վեհ խաչերը, որոնք կանգնեցուած էին լերան գագաթին, որպէս քաղաքի պահապաններ:

Մեր երկար վայելքներէն ետք, վար իջանք եւ այն նոյն կանաչապատ դաշտին մէջ նստելով ճաշեցինք: Ինչ որ պահի միտքս եկաւ <<Արաքս Գետ>> երգը եւ սկսայ երգել այդ լռութեան եւ հանգստութեան մէջ: Աւելի յաջող արշաւ չէի կրնար պատկերացնել, երբ բնութիւնը կարծես կախարդած էր զիս: Նոյն ոգեւորութեամբ վերադարձանք մեզի հետ տանելով ապշած աչքեր, ամբողջ ակնթարթ մը, որ մեզի հետ պիտի ըլլար յաւերժ:

Էտկար Էվոյեան

#### ՄԵԾ ՄԱՅՐԻԿԱ ԵՒ ՄԱՆԿՈՒԹԻՒՆՍ

Մեծ մայրիկիս հետ ամբողջ մանկութիւնս անցուցեր եմ: Քանի տարի ալ անցնի պիտի յիշեմ, թէ մանկութեանս ամենէն լաւ ժամանակը անցուցած եմ մեծ մայրիկիս հետ: Ինչքան պատմութիւններ կան որ տետրակի էջերը չեն բաւեր: Ամենէն սիրած պատմութիւններէս մէկը կը պատմեմ:

Մեծ մօրս հետ սովորութիւն ունէինք ճաշ եփել եւ քաղցրաւենիք պատրաստել: Ամենէն սիրած բանը այն էր, որ մեծ մայրիկս ինքն ալ նոյն սովորութիւնը ուներ իր մեծ մօր հետ: Կը սիրէի ինչպէս միասին ելակով կարկանդակ կը պատրաստէինք: Նոյնիսկ համը դեռ բերանիս մէջ է: Իսկ այն <<չեպուրեկիները>> ամենէն լաւն էին: Կը յիշեմ ինչպէս օր մը իրմէ ուզած էի պատրաստել, բայց մերժած էր որովհետեւ ապրանքները չունէր: Միւս օրը ան գացած էր խանութ եւ անհրաժեշտ ապրանքները գնած էր, որպէսզի դպրոցէս վերադառնալէ ետք պատրաստ ըլլայ եւ ես վայելեմ այդ համով-համով ճաշը: Այդ օրը բնաւ պիտի չմոռնամ:

Կը յիշեմ ինչպէս կ'երթայի մեծ մօրս քով, որ հայերէնի դասը միասին ընէինք, մեր հայերէնի գիրքը միասին կարդայինք, որ իմ կարդալը

սահուն ըլլար: Երբեմն կը ջղայնանար, երբ սահուն չըլլար կարդալ: Կը փորձէր ջղայն ցոյց տալ, որ ես վախնամ եւ սկսիմ սահուն կարդալ: Կը յիշեմ ինչպէս ամէն անգամ դպրոցէն վերադառնալէս ետք կը հեռաձայնէր ինձի եւ կ'ըսէր. «Եկուր ճաշ ուտես»: Գիտէք, մեծ մօրս հետ ճաշ ուտելը ամենէն աղուոր զգացումն էր:

Երբ զարմիկիս հետ մեծ մօրս տունը ըլլայինք, կը սիրէինք թուղթով բաներ շինել, ներկել որ մեծ թուղթի վրայ փակցնենք եւ աղուոր բան ելլէ: Օր մը խեժը պակսեցաւ եւ ուրիշ չունէինք: Մեծ մայրիկս ըսաւ. «Հիմա ես ձեզի խեժ կը պատրաստեմ»: Զարմիկս եւ ես զարմացանք եւ խնդացինք, որովհետեւ կարծեցինք թէ անկարելի է խեժը տունը սեփական ձեռքերով պատրաստել: Սակայն մեծ մայրիկս մեզի խեժ պատրաստեց եւ մենք սկսանք թուղթը գեղեցկացնել:

Ի՛նչ աղուոր օրեր էին: Տխուր է, որ ինչքան ալ ուզեմ այդ օրերը ետ չեմ կրնար բերել: Հիմա շատ բաներ կը յիշեմ, ինչպէս գիշերները միասին կը գրուցէինք եւ արձակուրդներուն ինձի եւ զարմիկներուս խաղավայր կը տանէր: Շատ կ'ուզեմ ետ գան այդ օրերը որ մեծ մօրս գոնէ վերջին խօսքերս ըսեմ, մեծ շնորհակալութիւն յայտնեմ որ իմ մանկութիւնս ամենէն լաւ օրերն էին: Ես գիտեմ թէ երբէք պիտի չմոռնամ մեծ մօրս եւ իր սուրբ ձեռքերը:

Նաթալի Համբարձումեան

ԸՆԿԵՐՆԵՐՍ

Ընկերներս

Միշտ անոնք են՝

Որ կողքիս են

Վատ կամ լաւ ժամուն:

Ընկերները

Անոնք են՝

Որ հետո կը խնդան,

Նաեւ կու լան:

Ամէն ինչի մէջ

Քեզի կը հասկնան:

Այս պատճառներով

Պէտք է

Մեր ընկերները

Միբենք եւ յարգենք:

Նաթալի Համբարձումեան

## ԶՄԵՌԸ ԴԻՏՈՒԱԾ ՊԱՏՈՒՀԱՆԷՍ

Զմեռը շատ անուշիկ կը համարեմ, որովհետեւ կը բերէ ուրախութիւն եւ ժպիտ մարդոց երեսին: Զմեռը շատ կը սիրեմ, որովհետեւ ամէն ինչ ճերմակ կը դառնայ: Կը սիրեմ մանաւանդ երբ ընկերներուս հետ ձիւնագնդիկ կը խաղամ:

Ես երբ Հայաստան էի ունէի շատ ընկերներ եւ շատ կը սիրէինք ձիւնագնդիկ խաղալ: Մենք երբ որ շատ ըլլայինք խումբերով կը խաղայինք, բայց երբ քիչ ըլլայինք կը խաղայինք ամէն մարդ իրարու դէմ: Բացի ձիւնագնդիկ խաղէն ես կը սիրէի ձիւնեմարդ ստեղծել եւ շատ անգամներ զարմիկիս կամ մայրիկիս հետ:

Զմեռը երբեմն շատ պաղ կ'ըլլար դուրսը, այդ իսկ պատճառով ես տունը կը մնայի եւ կը հետեւէի պատուհանէն թէ ինչպէս փաթիլները կ'իյնային յատակին: Ես այդ օրերուն կ'ապրէի մեծ մօրս տունը: Շատ կը նեղուէի երբ մայրս կ'ըսէր թէ այդ օր չեմ կրնար դուրս երթալ ձիւնով խաղալու:

Ես հիմա Կիպրոս կը բնակիմ, Նիկոսիա: Հոս քաղաքը ընդհանրապէս տաք կ'ըլլայ իսկ ձմեռն ալ մեղմ ու ձիւն չի գար: Միայն լեռները ձիւն կ'ըլլայ: Ես 5-6 տարի է որ Կիպրոս կ'ապրիմ եւ երբեք չեմ տեսած իմ տունիս առջեւ ձիւնի փաթիլներ իյնան: Ես երբ կը նայիմ իմ պատուհանէս դուրս կը յիշեմ իմ մանկութիւնս , իմ մանկութեանս օրերը, երբ կը խաղայի եւ կը դիտէի վերէն ձիւնի փաթիլներու իյնալը յատակին:

Ես շատ պիտի ուզէի անգամ մը եւս ապրիլ իմ մանկութեան տարիներս:

## Ալիկ Չախոյեան

### ՏԵՏՐԱԿՍ

Երէկ գիշեր իմ տետրակս,

Կը խօսէր սենեակիս մէջ .

Բայց ես սենեակիս մէջ չէի,

Եւ կը լսէի իրեն դուռին ետեւէն:

Ան կը բողոքէր թէ աշակերտները,

Երբեմն անկապ ձեւով կը նկարէին,

Սակայն ոմանք` նուրբ ու գեղեցիկ:

Փոքրերը դասերը կը գրէին,

Իսկ մեծերը` քառեակներ ու շարադրութիւններ:

Կ'ըսէր թէ գիրքերու թուղթերը,

Թերեւս իրմէ աւելի բախտաւոր էին,

Որոնց վրայ գրուած էին`

Լաւ պատմութիւններ աշակերտներուն համար:

Ես իմ տետրակէս այսքանը լսեցի:

Կարելի է՝ ինձ տեսաւ ու լռեց:

Ալիկ Չախոյեան

ԿԸ ՅԻՇԵՄ ՄԱՆԿՈՒԹԵՆԷՍ

Ես իմ մանկութենէս շատ յիշատակներ ունիմ բայց ամենալաւերէն մէկն է, երբ Եթովպիա կ'երթայի: Ես Եթովպիա կ'երթայի որովհետեւ ծնողներուս ծննդավայրն է եւ ամբողջ ընտանիքս հոն կ'ապրի:

Իմ ամենասիրած յիշատակս Եթովպիայէն այն է, երբ ամբողջ ընտանիքով հաւաքուած էինք Եթովպական նոր տարիին առիթով: Իմ մանկութենէս աղուոր յիշատակ է, որովհետեւ շատ հարազատ կը զգայի եւ ընկերական մթնոլորտի մը մէջ կը գտնուէի: Ես կը մնայի հօրս ընտանիքին տունը, որ կը գտնուէր Եթովպիայի մայրաքաղաք Ատիս Ապպայի մէջ: Կը յիշեմ թէ մանկութենէս շատ ուրախ կը զգայի ճամբորդելով այս երկիրը, ընտանիքս տեսնելու համար, նաեւ առիթ կ'ըլլար շատ նորութիւններ սորվելու՝ մշակութային եւ սովորութիւններու:

Իմ մեծ մայրս դժբախտաբար գրեթէ երկու տարի առաջ մահացաւ: Բայց ան իմ մանկութեան յիշատակներուս մէջ է: Ես շատ ուրախ եմ իրեն մօտէն ճանչցած ըլլալու եւ մանկութեան օրերս հետը անցուցած ըլլալու համար: Փոքր տարիքիս եւ շատ անգամներ հոն իրենց հետ անցուցած եմ ամառնային արձակուրդներս:

Վերջին անգամ երբ Եթովպիա գացի ամառ էր, բայց օդը ցուրտ էր եւ անձրեւոտ: Բնութիւնը հոն տարբեր է եւ ինձի համար հետաքրքրական:

Իմ մօրս ընտանիքն ալ Եթովպիա կ'ապրի եւ շատ ուրախ եմ մօրս ընտանիքն ալ մօտէն ճանչնալու համար: Մանկութենէս ունիմ շատ յիշատակներ Եթովպիայէն, որոնք անմոռանալի են ինձի համար: Յուսամ ապագային ալ աւելի մեծցած՝ կրկին անգամ կը ճամբորդեմ հոն:

Սամսոն Բարսեղեան

## ԳՆԴԱԿԸ

Կը սիրեմ գնդակով խաղեր խաղալ՝  
Ինչպէս ոտնագնդակ եւ պասքէթպոլ:  
Երբ գնդակի հետ կը խաղամ,  
Շատ կ' ուրախանամ եւ հոգիիս մէջ  
Զգացում մը կու գայ, որ կը զուարճացնէ:  
Իմ սիրած զբաղմունքն է պասքէթպոլը:  
Ես շատ լաւ կը խաղամ  
Եւ հասակս ալ կը բարձրանայ:  
Իսկ գալով ոտնագնդակին,  
կը նախընտրեմ ես դիտել՝  
Խաղերը հետաքրքրական:

Սամսոն Բարսեղեան

## ՊԱՏՈՒՀԱՆԸ ԵՒ ԻՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ես եւ ընտանիքս Հայաստան մեկնեցանք քանի մը օրուան համար:  
Գացինք այն տունը որ վարձած էինք: Երբ ներս մտանք, առաջին բանը որ  
նկատեցի շատ անուշիկ պատուհաններ կային: Այդ պատուհանները  
սովորական պատուհաններ չէին: Ամէն օր նոր պատմութիւն մը կար  
պատուհանին ետեւէն:

Առաջին օրը երբ արթնցայ, առաջին բանը որ ըրի վարագոյրը բացի: Երբ  
պատուհանէն դուրս նայեցայ շատ ուրախութիւն տուաւ ինձի, որովհետեւ  
կը ձիւներ: Այդ պաղ ձիւնը ծածկած էր շատ գեղեցիկ ձեւով պատուհանէն  
դուրս ամէն կողմ: Այն առտուն ինքզինքիս ըսի, որ այսօրուայ

պատուհանին պատմութիւնը ձիւնը կը գծէր իր անուշիկ տեսարանով:  
Երկու օր ձիւնով անցուցինք եւ պատուհանին պատմութիւնը չէր  
փոխուած: Յաջորդ օրը որոշեցինք ճաշի երթալ ընտանիքիս հետ:

Գացի սենեակս որ պատրաստուիմ: Բացի վարագոյրը տեսնելու եթէ  
պատուհանին պատմութիւնը փոխուած էր: Հազիւ բացի տեսայ թէ  
իրականէն փոխուած էր եւ ձիւնի պատմութիւնը վերջացած էր: Այդ  
օրուայ պատմութիւնը անձրեւն էր: Բայց այն անձրեւը միայն անձրեւ չէր:  
Կամաց-կամաց այն սկսաւ նկար մը գծել: Ես սկիզբը շատ չէի հասկնար  
ինչ կը գծէր: Կը մտածէի թէ ինչ կրնար ըլլալ գծածը: Տեսայ որ մեր ամբողջ  
ընտանիքը նկարուած էր պատուհանին վրայ: Ես զարմացայ եւ  
ուրախացայ : Ամենաաղուոր ձեռով աւարտեցաւ մեր վերջին գիշերը  
Հայաստան:

Փաօլա Զատոյեան

## ԳՐՉԱՏՈՒՓ

Իմ անունս գրչատուփ է:

Ես ամէն օր կը գործածուիմ .

Հետս կը բերեմ միւս ընկերներս:

Առաջին ընկերոջս անունը մատիտ է

Եւ մատիտին եղբայրը ռետինը,

Ինչպէս նաեւ գոյնզգոյն մատիտները:

Ընկերներուս հետ ամէն օր կը ճամբորդենք:



Միրած տեղերէս մէկը արուեստանոցն է:  
Շատ կը սիրեմ տեսնել աղուոր գծագրութիւններ:  
Ես եւ ընկերներս լաւ կ'ըլլանք երբ հոն ճամբորդենք:  
Երբեմն պարագաներ կան որ կը կորսուիմ:  
Փաօլային դասընկերները ինծի տեղ մը կը պահեն:  
Բայց նոյն ատեն կը սիրեմ պահուրտուք խաղալ:  
Երբեմներն ալ կը ցաւիմ երբ`  
Գնդակ կարծելով կը նետեն գետին:  
Բայց լաւ բան է գրչատուփ ըլլալ  
Եւ Փաօլային հետ դպրոց երթալ:

Փաօլա Զատոյեան

ՈՏՆԱԳՆԴԱԿ

Ես Արմանն եմ:  
Կ'ուզեմ գրել ձեզի,  
Իմ սիրած զբաղմունքի`  
Ոտնագնդակի մասին:  
Վեց տարեկանիս սկսայ  
Խաղալ ոտնագնդակ:  
Այն գրաւեց հետաքրքրութիւնս,

Եւ ես սիրով մինչեւ այսօր,  
Դեռ կը խաղամ վազելով:  
Հիմա շաբաթը երեք անգամ,  
Ես կ'երթամ դաշտ  
Ու կը խաղամ  
Իմ խումբիս հետ:  
Շատ կը սիրեմ ես`  
Բնութեան մէջ վազել ազատ,  
Եւ ընկերներուս հետ`  
Խաղը տանիլ առաջ:  
Իսկ Շաբաթ օրերը,  
Ընկերներուս հետ միասին  
Կը խաղանք ոտնագնդակ`  
Մեր քարտէսին վրայ:  
Ոտնագնդակ խաղալը  
Կու տայ ինձի ուրախութիւն:

Արման Աթանասիտիս

## ՕՐԱԳԻՐ

Միբելի օրագիր,

Այսօր Ապրիլ 27 է, Հինգշաբթի, երրորդ օրը դպրոցի արձակուրդէն վերջ: Այսօր երբ արթնցայ ուրախ էի որովհետեւ գիտէի թէ տիկին Վիոլէթին հետ երկու պահ դաս ունէինք: Ահա հիմա ալ դասը սկսաւ: Առտու կանուխ տիկինը մտաւ դասարան եւ ժպիտ դրաւ մեր դէմքին:

Յիշեցի թէ կ'ուզէի պատմել արձակուրդս ինչպէս անցաւ: Առաջին օրը երբ տունն էինք, ուրախ-ուրախ կանուխ արթնցայ եւ սկսայ տունը մաքրել: Ապա մեծ հայրիկիս հետ ժամանակ անցուցի իր տանը: Խաղ խաղացինք եւ խօսեցանք: Մեծ հայրիկիս հետ յիշեցինք մեր հին տարիները, երբ ես պզտիկ էի եւ երբ մեծ հայրիկս պզտիկ էր: Շատ նոր պատմութիւններ պատմեց մեծ հայրս իր մանկական տարիներէն եւ վերյիշեց ինձի այն ժամանակէն, երբ ես մանուկ էի: Արձակուրդներուն մեծ հայրիկիս հետ աւելի ընկերացայ եւ աւելի նոր բաներ սորվեցայ: Կը յիշեմ նաեւ ինչպէս միասին տունը կը մաքրէինք:

Հիմա ալ դպրոց սկսաւ եւ աւելի քիչ ժամանակ կ'անցընենք միասին, բայց իրարու ամենաշատը կը սիրենք: Կիրակի օրերը միասին եկեղեցի կ'երթանք եւ այդ պատճառով միշտ մեծ հաճոյքով կը սպասեմ Կիրակի օրերը:

Անցեալ օր միասին յիշեցինք մեծ մօրս: Այդքա՛ն նոր բաներ գիտցայ: Զգացում կար որ մեծ մայրս ալ հոն մեզ հետ նստեր էր եւ մեզի հետ կը վերյիշէր այդ օրերը: Յուսամ այդպիսի օրեր նորէն պիտի ըլլան, որ մեծ հօրս հետ նստինք եւ վերյիշենք հին օրերը եւ զրոյցները: Այսօրուայ համար այս է սիբելի՛ օրագիր:

Նաթալի Համբարձումեան

## ՕՐԱԳԻՐ

Միրելի Օրագիր,

Երեւի երկար ժամանակ անցած է իմ վերջին գրածէս: Օրերը շատ յագեցած էին եւ ժամանակս չէր ներեր նորէն բանալու այս տետրակը եւ միտքերս շարադրելու : Բայց երէկուայ օրը չէր կրնար դուրս մնալ իմ օրագրէս: Երկար տարիներու ուրախ եւ տխուր պահերու, ընկերական ջերմութեան, ուսման առատութեան վերջը դրուեցաւ երէկ: Ես աւարտեցի դպրոցը:

Օրը ինծի համար շատ շուտ սկսաւ: Կարծես սովորական դպրոցական օրուայ պէս կը պատրաստուէի դպրոց երթալու, բայց այս անգամ ոչ որպէս շարքային աշակերտ, այլ հպարտ աւարտող: Դպրոցի անցուդարձը վերածուած էր փոքր խճողումի, քանի որ բոլորը կարծես թէ զբաղած էին բանով մը: Պատրաստ էինք վերջին անգամ փորձելու <<Երեւանը>> եւ <<Վերջին Չանգը>> : Ասմունքողներս պատրաստ էինք վերջին անգամ բարձրաձայն ըսելու <<Ես Իմ Անուշ Հայաստանի . . . >>:

Փորձերու եւ պատրաստութիւններու մասը կարծես թէ հանդարտած էր եւ կը մնար միայն սպասել այդ անվերադարձ պահուն: Որքան ժամերը կը մօտենային այնքան անբացատրելի յուզում մը կը շատնար մէջս: Կարծես թէ այդ պահուն ոչ մէկ պաշտօնական հագուստ, նոր կօշիկ ու զարդ չէին կրնար մեղմել յուզումը:

Ի վերջոյ հասաւ այդ պահը, երբ ամբողջ դասարան մը կեցած էր բացուող վարագոյրներու ետեւ՝ ամբողջովին նոր հագ ու կապով ու նպատակ դարձած երազանքներով: Խօսքեր, երգ ու պար, ինքնութեան գիրք եւ անլռելի ծափահարութիւններ, որ մեզի հետ պիտի մնային յաւերժ, որպէս կեանքի ուղեկից եւ նոր սկիզբներու հետեւորդ:

Էտկար Էվոյեան

## ԻՄ ՀԱՅԵՐԷՆԻ ԳԻՐՔՍ

Երբ ես քեզի ձեռքերուս մէջ կ'առնեմ, ապահովութիւն մը կը ծփայ հոգիիս մէջ: Բառերով ու պատկերներով լեցուած, իմ հոգիիս պարապութիւնը կը լեցնես ու ինձ կը կշտացնես: Դուն իմ լոյսս ես խաւար ճամբու վրայ: Ինծի խելացի կը պահես ու կեանքի շատ դասեր կը սորվեցնես:

Մեր Այբուբենը եւ հարուստ լեզուն կը կռես քու էջերուդ վրայ եւ կը սորվեցնես մեզի: Ամէն տող նոր դաս, ամէն տող նոր նիւթ ու ամէն էջ նոր պատմութիւն: Քու գունատը էջերդ իմ միտքս պայծառ կը պահեն: Երբ քեզ կը նայիմ , դուն իմ սիրելի գիրքս, կը յիշեցնես ինծի կեանքի կարեւորութիւնները: Ինծի ուսում կու տաս: Ինծի նոր բաներ կը սորվեցնես ամէն օր:

Իմ հետս միշտ պիտի մնաս, իմ սիրելի Հայերէնի գիրքս: Ամենակարեւորը դուն ինծի հայ կը պահես: Շատերը քեզ կը սիրեն եւ կը շահին զարգացման հարստութիւնը: Ամենասիրելի Հայերէնի գիրքս, դուն մեր՝ աշակերտներուս կեանքին համար՝ ամենակարեւորը:

Գրիգոր Բարոյեան



